ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 2-ի հողային օրենսգրքի 42-րդ հոդվածի վերնագիրը և բովանդակությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 42. Մարզպետի իրավասությունը հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ մշտադիտարկման և վերահսկողության բնագավառում

1. Մարզպետը մշտադիտարկում է իրականացնում՝

1) հողային հարաբերությունների բնագավառում համայնքների ղեկավարների գործունեության նկատմամբ.

2) համայնքների հողերի օգտագործման սխեմաների, գլխավոր հատակագծերի իրականացման նկատմամբ.

3) պետական և համայնքային սեփականության հողամասերի տրամադրման, հետ վերցնելու, հողամասերի վարձավճարների և հարկերի գանձման, հողերի պահպանության միջոցառումների նկատմամբ:

2. Մարզպետը վերահսկողություն է իրականացնում՝

1) մարզի տարածքում հանրապետական և տարածքային նախագծերի իրականացման նկատմամբ.

2) մարզի վարչական տարածքում գտնվող հողային ֆոնդի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ 3) մարզի սահմանանիշերի պահպանման նկատմամբ:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: